ՄԱՐՏԻ 14 (26) 1877 ՄԱՐՏԻ 14 (26) № 13

ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 7 ռուբլ, կէս տարվանը 4 ռուբլ։

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը, պ. Ծատուրեանի և Արասխանեանի խանութում

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի *Тифлисъ. Редакція „Мшакъ"*

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 (Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Թիւրքիայի ապագան։—Ներքին տեսութիւն։ Ֆոսֆորէնի վաճառականութեան մասին։ Նամակ Յիսինվալից։ Նամակ խմբագրին։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Թիւրքիա։ Թիւրքաց տպագրական նոր օրէնք։ Ամերիկա։—Խառն լուրեր։—Յայտարարութիւններ։

ԹԻՒՐՔԻԱՅԻ ԱՊԱԳԱՆ

—

Օսմանեան պետութիւնը սահմանադրական է դարձել, Կ. Պոլսում, Թիւրքիայի մայրաքաղաքում, բացվել է արդէն ազգային ժողովը (պարլամենտը)։

Ուրեմն սահմանադրութիւնը էլ երաշ չէ Թիւրքիայի համար, այլ իրականութիւն է....

Այդ տեսակ երևոյթ, կարելի է հաստատ ասել, երբէք պատահած չէ մարդկային պատմութեան մէջ՝ սահմանադրութիւնը շնորհվում է ժողովրդին մի բռնաւոր տէրութեան ազատ կամքով....

Տէրութիւնը շնորհում է մի լայն, ամենաազատամիտ սահմանադրութիւն իր հպատակներին, որոնք երբէք չէին պահանջում և չէին էլ կարող պահանջել, որովհետև Թիւրքիայի մէջ ոչ թէ միայն մոլեռանդ ամբոխը ոչինչ հասկացողութիւն չունի ինչ բան է սահմանադրութիւնը, բայց մենք կասկածում ենք որ օսմանեան երկրի բարձր, կրթված, լուսաւորված դասն էլ հաղիւ թէ մի ճիշդ հասկացողութիւն ունենար սահմանադրութեան էութեան մասին։

Մենք չենք կարող հաւատալ որ մի երկիր, որ բնակեցրած է ոչ թէ միակերպ ազգաբնակութիւններից, այլ ամեն տեսակ միմեանց մէջ հակառակ, թշնամական ազգութիւններից և ցեղերից,—կարողանար ընդունակ լինել կառավարութեան սահմանադրական ձևին, մանաւանդ երբ որ այդ ազգերի մեծ մասը ամենախոր տգիտութենից, մինչև անգամ բարբարոսութեան և վայրենութեան դրութենից յանկարծ ստիպված են անցնել լուսաւորված երկիրների սահմանադրական կեանքին։

Մեզ անհնարին է երևում հիմնաւոր կերպով հաստատել սահմանադրութիւնը այն պետութեան մէջ, որ դեռ երեկ կարող էր գոյութիւն ունենալ միայն իր ծայրայեղ բռնաւոր, անսահման կամայական տէրութեան ձևի շնորհով։

Մեր դարում հրաշքներին չեն հաւատում, իսկ հաւատալ թէ երեկվայ բռնաւոր, բարբարոս, վայրենի, մոլեռանդ Թիւրքիան՝ միանգամից, սուլթանի հրամանով այսօր եւրոպական, ազատ, սահմանադրական պետութիւն է դարձել,—այդ նշանակում է հաւատալ հրաշքներին։

Ինչ ուզում են ասեն, այդ տեսակ երևոյթ պէտք է պատմութեան մէջ անուանվի յեղափոխութիւն, բայց միայն այն զանազանութեամբ որ դա վերևից եկած յեղափոխութիւն է, և ոչ թէ ներքևից։

Ուրեմն դա յեղափոխութիւն է և ամենաանսպասելի, սարսափելի, անխնայ յեղափոխութիւն։

Ամեն մի ազգի համար յեղափոխութիւնը նոյն նշանակութիւն ունի ինչպէս հիւանդութիւնը առանձին անհատի համար։

Հարցը այժմ նրանումն է՝ արդեօք Թիւրքիան ունի այն առողջ կազմվածքը, որ կարողանայ դիմանալ այդ տեսակ յեղափոխութեանը...

Կան կազմվածքներ որոնք կարող են դիմանալ այս կամ այն հիւանդութեան, բայց կան և այնպիսի կազմվածքներ, որոնք չեն դիմանում։...

Առհասարակ դժուար է, անհնարին է ամեն ժողովրդի համար առանց փոքր առ փոքր պատրաստվելու, առանց աստիճան առ աստիճան զարգանալու և վերանորոգվելու, միանգամից անցնել ամենածայրայեղ բռնաւորութենից դէպի ազատ քաղաքական ինքնավարութեան ձևը, բայց մանաւանդ այդ բանը մեզ անհնարին է երևում Թիւրքիայի պէս երկրի համար, որի ազգաբնակութիւնը բաղկացած է միմեանց դէմ թշնամական, միմեանց մէջ ոչինչ բարոյական, մտաւոր և տնտեսական կապ չունեցող ազգերից և ցեղերից։

Հետևանքը կարող է այն լինել որ Թիւրքիայի քաղաքական ամբողջ կազմվածքը, բաղկացած լինելով միմեանցից անկապ մասերից, յանկարծ ենթարկվելով այդ տեսակ սաստիկ յեղափոխութեան, ինչպէս բռնաւորութենից սահմանադրութեան անցնելը, չը դիմանալով այդ իրան անսովոր, անբնական, արուեստական, անողորմ, անխնայ, շուարեցնող, շարժող, կասեցնող մինչև անգամ մեռցնող հարուածին,—հետևանքը կարող է այն լինել, որ Թիւրքիան բռնաւորութենից յանկարծ անցնելով ազատութեանը, և հասկացողութիւն չունենալով ինչ բան է ազատութիւնը՝ կը հասնի միայն անիշխանութեանը։

Շմարիտ է, որ ինչպէս հրաշքների, այնպէս էլ մարգարէութիւնների դարը անցաւ,—բայց այնուամենայնիւ մենք մեզ թոյլ ենք տալիս Թիւրքիայի վերաբերութեամբ մարգարէանալ, որ շատ ժամանակ չի անցկենայ,—և Թիւրքիան կը հասնի կատարեալ անիշխանութեան, կընգնի այլ և այլ կտորների վրա, կը բաժանվի իր կազմող, բայց դարերով միմիանցից միշտ անկապ մնացած մասերի վրա։

Ահա՛ Թիւրքիայի ապագան։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖՈՍՈՓԷՆԻ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

—

Ֆոսոփէնի վաճառականութիւնը կապում է Բաքու քաղաքը Ռուսաստանի ամենամեծ վաճառաշահ քաղաքների և ծովակաճառների հետ և գիտնականներից շատերը մինչև անգամ համարձակ հաստատում են որ այդ նիւթի վաճառականութիւնը կարող է մեծ նշանակութեանը և ծաղկած վիճակի հասնել, եթէ օրինաւոր ուղղութիւն ստանայ, կարող է մինչև անգամ մրցել ամերիկական կերոսինի հետ։

Բայց ցաւելով պէտք է խոստովանած, որ անցեալ 1876 տարին մի այնպիսի վատ տարաւորութիւն գործեց Ռուսաստանի հաղիւ հազ մեր այդ կովկասեան ապրանքին ընտելացած վաճառականների վրա, որ այժմ շատ մեծ և անխոնջ աշխատութիւն է հարկաւոր՝ թէ ռուս վաճառականներին և թէ նրանց գործարանատէրերին կրկին անգամ գրաւելու և կրկին նոցա ուշադրութիւնը և հաւատը ստանալու....

Անցեալ 1876 թուին Ռուսաստան տարված Ֆոսոփէնի մեծ մասը ամենավատթար տեսակներից էր, այնպէս որ շատ մասը մինչև այժմ մնում է անվաճառ և ոմանք գնողներից ստիպված են դէն ածելու, անէծք կարդալով այն վաճառականների դէմին, որոնցից գնել են յիշեալ նիւթը։ Ցաւալին այն է որ այդ ամենավատթար ֆոսոփէնը տակառների յատակներում կրում էր նոյն նշանագրերը, ինչ որ կրում է միշտ ճշմարիտ լաւ ֆոսոփէնը։

Կաշխատեմ բացատրել այդ երևոյթի պատճառը։

Նաւթի երկու պատրաստութիւն կայ այստեղ՝ սև նաւթ անուանվածը և բուն ֆոսոփէնը։ Առաջին տեսակի նիւթ պատրաստողներից ոմանք իրանց պայմաններից բաւական շատ զեղծումների օրինակ ցոյց տուեցին։ Շատ անգամ նոքա էժան գներով վաճառվող նաւթի տեսակը բաց էին թողնում, ասելով թէ այն տեսակը չը կայ, իսկ մի և նոյն ժամանակ նաւթի նոյն ստոր տեսակը ուրիշներին թանգ գնով էին վաճառում։ Գործարանատէրերն էլ վնասից ազատվելու համար սկսեցին զեղծել նիւթը վատթար ֆոսոփէն պատրաստելով։ Աւելացրէք սորան և այն հանգամանքը որ այդ միջոցին լոյս ընկան այնպիսի անհմուտ նոր նոր վաճառականներ, որոնք բնաւ դրագուսի նշանակութիւնը չը գիտենալով, լցնում էին տակառները ֆոսոփէնով և ուղարկում էին Ռուսաստան, ռուս վաճառականներին թողնելով ուղարկված նիւթի արժանաւորութիւնը որոշելու հոգը։

Մի խօսքով անցեալ տարի այդ վաճառքի անունը այնքան կոտրվեցաւ, որ ներկայ 1877 թիւը հաղիւ թէ աջող ապագայ է խոստանում Բաքուի նաւթի վաճառման գործին։

Անցեալ տարիներում, ամեն ժամանակ դեկտեմբերի կէսից կամ յունվարի սկզբից բոլոր գործարանների $^3/_4$ թիւը գործում էին դիշեր և ցերեկ։ Բայց այս տարի նրանցից հաղիւ $^1/_4$ թիւը գործում է։ Ամեն ժամանակ մարտի սկզբում Կասպից ծովի վրա գտնվող բոլոր շոգենաւերը և առագաստաւոր նաւերի մեծ մասը բարձվում էին ֆոսոփէնի տակառներով, Ռուսաստան փոխադրելու նպատակով,—բայց այս տարի կարծես Բաքուի մէջ այլ ևս նաւթի գործարաններ չեն գտնվում։ Ամեն ժամանակ նաւթը հորերից ստացած, թարմ թարմ փոխադրվում էր գործարանները,—բայց այժմ ընդհակառակն մնում է ամբարներ, ուր նիւթի բաւական մեծ տոկոս կորչում է՝ մասամբ գոլորշիանալով, մասամբ ամենանուրբ մասնիկները գետնի տակ անհետանալով։ Հետազօտված է որ թարմ, աղբիւրից նոր հանած և ամբարի մէջ պահած նաւթի մէջ ահագին զանազանութիւն կայ։

Ուշադրութիւն դարձնելով նաւթի պատրաստութեան վրա, տեսնում ենք որ այդ նիւթը պատրաստող երկու տեսակ գործարաններ կան այստեղ, իրանց ունեցած դրամագլխի մեծութեան և տնտեսական գիրքի համեմատ։ Առաջին կարգին պատկանում են մի քանի հատ հարուստ գործարանատէրեր, Միրզոէվի և Բաքուի Նաւթի Ընկերութեան պէս։ Սորա միշտ գործում են և միշտ գովելի ֆոսոփէն են պատրաստում և ամեն ժամանակ ուրիշներից պուդին 20—50 կոպէկ զանազանութեամբ են վաճառում։ Բայց կան նոյնպէս վաճառականներ, որոնք իրանք գործարաններ չունեն, ոչինչ չեն պատրաստում, այլ ականջները սրած ուշադրութեամբ հետևում են առևտրական ձայներին՝ եթէ նաւթի գինը Ռուսաստանում լաւ է, իսկոյն պատուիրում են փոքրիկ գործարաններին սկսել պատրաստել նաւթը։ Իսկ այս վերջին

գործարարանները, իրանք մեծ դրամատէրեր չը լինելով, զուրկ լինելով պատրաստ դրամագլխից, միայն այն ժամանակ են սկըսում գործել, երբ հրամաններ են ստանում վաճառականներից, եթէ ոչ մնում են պարապ։

Այժմ պարզ է թէ ինչի վաճառականները ըսելով Ռուսաստանից նաւթի գնի մասին վատ ձայներ, սիրտ չեն առնում ոչինչ պատուիրելու պատրաստող գործարաններին ստորին կարգի և ինչ պատճառով այդ վերջին գործարանները խափանված են, նաւթը ամբարներում է ածված, շոգենաւերը և առագաստաւոր նաւերը անբեռն են շրջում.... Եւ այդ դրութիւնը շարունակվելու է մինչև որ Ռուսաստանում նաւթի գները կը լաւանան, կը բարձրանան։ Իսկ այն ժամանակ ամեն մի գործարան կը չտապէ օգուտ քաղել եղած լաւ գներից, կը շտապէ պատրաստել նաւթ և ստորին կարգի պատրաստող գործարանները կրկին ամեն ջանք գործ կը դնեն մեծ գումարատէր գործարանների հետ մրցելու համար,—և կրկին զեղծելով ֆօտոգէնը այդ նիւթը կը վատթարանայ և կրկին նրա գինը կիջնէ և վաճառքի անունը կը կորվի....

Բայց արդեօք աւելի լաւ չէր լինի որ վաճառականները այժմուց արդէն սկսէին նաւթի մանաւոր քանակութիւնը պատուիրել, որքան որ գիտաւորութիւն ունեն ծախելու, կամ այն քանակութեան գնէ կէսը և ուշադրութիւն դարձնէին ստացած ապրանքի ընտիր լինելու վրա և չուրախանային գործարանատիրոջ անհաշիւ միամտութեան պատճառով որ նա շատ անգամ չը գիտենալով յանձն է առնում էժան գնով նաւթ պատրաստելը և յետոյ, երբ տեսնում է թէ ինչպէս պիտի քաշէ, սկսում է խաբեբայութիւններ անել, զեղծել, փչացնել նիւթը, լաւը ստոր արժողութիւն ունեցողի հետ խառնելով։ Աւելի լաւ է որ վաճառականը պուդին 5 կօպէկ աւելի տայ, որպէս զի գործարանատէրն էլ տեսնելով իր աշխատանքը վարձատրված, ուրախութեամբ յանձն առնէ ընտիր նիւթի պատրաստելը։

Այսպիսով միայն կարելի է մեր նաւթի ընկած գործը բարձրացնել և նրան իր առաջվայ նշանակութեանը հասցնել։

Ա. Զախմախսաղեանց

ՆԱՄԱԿ ՑԽԻՆՎԱԼԻՑ

Մարտի 3-ին

Այժմ գտնվում եմ Ցխինվալում, այսինքն 30 վերստ հեռու Գօրուց դէպի հիւսիս։ Ցխինվալը մի այնպիսի գիւղ է, որի նմանը չը կարծեմ թէ Գօրու գաւառում գտնվի թէ իւր դիրքով և թէ իւր քաղցրահամ ջրով ու առողջարար օդով։ Այս գիւղը գտնուելով մի ձորի մէջ շրջապատված այգիներով և ապա հիւսիսային կողմից ձիւնապատ Էլբրուսի սարերով, մի գեղեցիկ տեսարան կը ներկայացնէ։ Գիւղի միջով անցնում է մի սրնթաց Լիախվայ գետը, որի խավանջանաց զարհուրելի ձայնը մանաւանդ գարունքին շատ երկար տարածուելով օդի մէջ, արգելք է լինում շատերի կամացուկ խօսակցութեանց։ Որքան ահեղ է այս գետի տեսարանն գարունքին, այնքան հանդարտ և զմայլելի է աշունքին, երբ ջուրը փոքրանալով պարզվում է ու միջի գոյնզգոյն քարերի փայլողութիւնն ու ձկների արագաշարժ շարժողութիւնը նկարչի վրձինը կը շարժէ։ Այս միակ գետն է, որով կը բաւականանայ թէ Ցխինվալը իւր շրջակայ գիւղերով և թէ նոցա արտօրայքը, այգիները և ջրանցները։ Թէ և Ցխինվալը, ինչպէս տեսանք, զուրկ չէ բնութեան գեղեցկութիւնից, թէ և Ցխինվալը իւր քաղաքային շինութիւններով ու ժողովրդի արտաքին զարդարանքներով գովելի գիւղ է, բայց և այնպէս ուշադրութեան արժանի է գիւղի կեղտոտութիւնն ու անմաքրութիւնը։ Ամեն մի քայլափոխում աղբի ահագին կոյտեր են ածած. ամեն փողոցում սատկած կենդանիներ են թափած. սրա վերա բարդուելով ժողովրդի բնակարանների միմեանց վերա կուտակվելը ու նոցա մէջ թաղաւորող անմաքրութիւնը Ցխինվալը կարծես թէ կորցրել է իւր բնութեան բարիքը և զանազան հիւանդութիւններով կոտորվում են տեղացիքը։

Զարմանալի ժողովուրդ. այսքան տարի փորձվելուց յետոյ չեն ուզում համոզվել որ իրանց մի բժիշկ է հարկաւոր։

Ժողովուրդ մեծ մասամբ պարապում է վաճառականութեամբ և այգեգործութեամբ, բայց թէ վաճառականութիւնը և թէ այգեգործութիւնը շատ անհնախանձելի դրութեան մէջ է գտնվում։ Այգեգործութիւնը չը դուրս գալով իւր նահապետական վիճակից, ուրեմն և չէ հասնում իւր ցանկալի նպատակին։ Բաւական է այստեղի գինին խմել և իսկոյն աչքերից արտասունք կը թափվի սատանի թթվութիւնից, իսկ եթէ հարցնես ցխինվալեցուն, նրա կարծիքով իւր գինին ամենաընտիրն է, իսկ ծառի պտուղների վերաբերութեամբ, եթէ եղեամից ազատ է մնացել, պէտք է ասել որ բաւական օգուտ են քաղում, որովհետև պահելու պտուղները՝ տանձն ու խնձորը ծախում են Թիֆլիսու վաճառականների վրա, իսկ փտած մրգից չնում են չիր (չորացած պտուղ)։ Տեղացիքը վաճառականութիւն են անում չրջարնակ օտարի հետ, որոց լեզուի հետ շատ լաւ ծանօթ լինելով, աշխատում են ամեն կերպով խաբել ուղորմելի օտարին։ Նոցա վաճառականութիւնը երկու տեսակ է լինում՝ փողով և ապրանք ապրանքի վրա փոխելով։ Իրանք տալիս են աղ, երկաթ, բամբակ, խմիչք, չորեղէն, իսկ նոցանից ստանում են պանիր, եղ, բուրդ, լուսածաղիկ, խոզի մազ (щетина) թիւթիկ (մի տեսակ փափուկ և թանգագին չալ է)։

Ցխինվալեցիք լաւ ճանաչելով գիւղացուց, երբ այս վերջինները գալիս են պարտք առնելու, հազար երաշխաւորներ պէտք է բերեն, ապա թէ ոչ պարտք չեն կարող վերցնել, ի հարկէ սա ցխինվալեցիների մի տեսակ քաղաքականութիւն է, և սրա հետևանքը այն է լինում, որ գիւղացին ժամանակին իւր պարտքը չը կարողանալով վճարել, մէկը հինգ է դառնում և ապա ընկնում պրիստավի հսկողութեան ներքոյ. ծախում են նրա եզներն ու գոմեշները ու ինքը մնում է սրկլոր։ Փորձեցէք մի անգամ ասել ցխինվալեցուն թէ նրա վարմունքը հարստահարութիւն, ամարդութիւն է, և նա ձեզ կը պատասխանէ. «պ. այդպէս տաք տաք մի խօսար. մեր դաղած փողի մէջ գիտես քանի կաթիլ արիւն կայ»։ Եւ իրաւի այդպիսի ճանապարհով դաղած փողը շատ խեղճերի արիւնով է ներկված։

Այստեղ շատ յարմար կը լինէր ցխինվալեցուց մի քանի նկատողութիւնք անել. ցխինվալեցին շատ ճարպիկ է և հմուտ դատաստանական գործերին և օրէնքներին. բաւական է մի երկու խօսք բանալ տեղացի 15 տարեկան տղու հետ և նա ձեզ уставъ ի մի քանի կանոններ անգիր կասէ։ Ցուցեցէք մի քանի հազար մանէթ պարտք ցխինվալեցուն և ալ ևս չը խընդրէք, որովհետև իւր կամքով չի տալ, իսկ եթէ բանը դատաստանին ընկնի, փողերիդ մնաս բարով պիտի ասես, որովհետև պարտապանդ իւր կալվածքներն ու կարողութիւնն փոքր ժամանակում դարձնում է իւր կնոջ սեփականութիւն, իսկ քեզ մնում է սուղից ստացած լիսաը լիզել։ Հարկաւոր չէ շատ երկարացնել. բաւական է մի քանի օր մնդալ Գօրու դատաստանատները և դուք կը տեսնէք ցխինվալեցուց խումբերի անդադար ներկայութիւնը, կարդացէք հանապազօրեայ վճռելու գործոց ցուցակը և ձեր աչքին կը հանդիպեն ցխինվալեցուց ազգանունները։ Ընտանեկան յարաբերութեանց մէջ կանայք թէ և ըստ երևոյթին հպատակում են իրանց ամուսիններին, իրողապէս հակառակ ենք տեսնում. երբ մի քանի ժամանակ կենակցելով ծանօթանում ենք նոցա ընտանեկան կեանքին։ Կինը տան մէջ կամ կատարեալ տէր է, իշխան է, այնպէս որ մարդը ոչ մի գործ չէ կարող բընել առանց կնոջ համաձայնութեան, կամ կատարեալ տարուկ. սրա համար որ երբեմն կինն է մարդուն հայհոյում ու երբեմն մարդը կնոջ, երբեմն մէկն է խռովում ու երբեմն միւսը։ Կինը առանց հաշիւ տեսնելու իւր մարդու կարողութեան վրա, պահանջում է անպատճառ նորանոր և յարմար շորեր ունենալ, իսկ երբ մարդը հաւատացնում է թէ չունի այնքան կարողութիւն, ստանում է հետևեալ պատասխան. ես էնդուր եմ մարդու գնացել, որ կեանք վարեմ, ոչինչ պակասութիւն չունենամ, իմ հարևանների աչքում մեծ երևալ և այլն։ Ահա թէ ինչու ցխինվալեցի կանանց նայելով երևում են իրը թէ սոքա լինէին մէ մի լօրդի կանայք, իսկ մարդոց նայելով կարծես սոքա լինէին ամենաչքաւոր մշակներ։ Ցխինվալը, որ ունի 419 տուն բնակիչ, չունի մի ուսումնարան, չունի մի կրթարան, ոչ տղայոց և ոչ օրիորդաց, ոչ տէրութենական և ոչ ժողովրդական, որի մէջ գոնէ ապագայ սերունդը կրթվելով դուրս գար իւր տգիտութիւնից, այլ ամեն ծնող բաւականանում է իւր տղուն վրացերէն կարդալ, օտերէն խօսալ ու էրթի փուլի սովորացնելուց յետոյ ազատ կացուցանել իւր զաւակին, իսկ վերջինը այնուհետև նստում է իւր հօր խանութում կամ մշակութիւն անում այգիումը և կամ գինի խմելով անցկացնում իւր գեղեցիկ մանկական ոսկէ ժամերը։ Աղջկերանց համար այդ ևս չեն անում, այլ աղջիկը մնալով իւր հօր տանը, պարապ է անցկացնում իւր կեանքը մինչև կը հասնի 15—17 տարեկան հասակին և այնուհետև մարդու գնում։ Ցեղայս ընակիչներից 200 տուն հրէայք են, 112 հայք և 107 տուն վրացիք։ Այս երեք ազգութիւնն էլ բնակվում են առանձին առանձին թաղերում։ Հրէաները, որոնք բազմաթիւ են միւս ազգութիւններից, բնակվում են գիւղի հարաւային կողմը, ունեն 6 աղօթատուն և վարում են շատ կեղտոտ կեանք թէ տներում և թէ հագուստի և կերակրի կողմից։ Անկարելի է սոցա թաղումն անցնել առանց զզուանքի սարսափելի դարշահոտութիւնից, իսկ տուն մտնելու համար պէտք է նախապէս զգուշանալ, որ մարդ չուշաթափուի։ Ոչ պակաս զարմանք է յարուցանում մարդու մէջ, երբ փոքր ինչ ծանօթանում է նոցա կենցաղավարութեան հետ։ Չես գտնի մի հրէայ, որ բաւական փող չունենայ, բայց և այնպէս չես գտնի մի հրէայ, որ գոհ լինի իւր վիճակից և միշտ սոխ սխտոր ու չոր հաց ուտելով պատրաստ է գալի շրջակայ գիւղերը ու իւր ապրանքն ծախում։ Թէ այսպիսի ցաւալի և տմարդի կենցաղավարութիւնը և թէ այն ցաւալի սովորութիւնը, որ ամեն ճչղութեամբ կատարում են, այսինքն 10—11 տարեկան աղջկան պսակելը, կարծեմ թէ ֆիզիկապէս և բարոյապէս դուրս են բերել մարդկութեան շրջանից և նայելով նոցա նիհար երեսին անկարելի է չը խղճահարուել։ Ընթերցողի ուշադրութիւն եմ դարձնում նոցա մի զարմանալի սովորութեան վրա։ Հրէաները ունեն մի խախամ (քահանայ կամ բարբի) որին միայն թայլ է տուած կենդանին մորթել. մորթելուց յետոյ հանում է կենդանու թոքն ու փչում. եթէ թոքը վնասուած չէ, իրաւունք է տալիս նրա միսն ուտել, իսկ եթէ վնասուած է պատռվում է չը մերձենալ այն մսին և եթէ 60 մանէթ էլ տուած լինեն ստիպուած են դէն ձգել (սոքա մահացու մեղք են համարում ուրիշից մորթաց կեղտոտ միսն ուտել. իրանք ընկերութեամբ են առնում ու մսի մէջ եղած բոլոր ջիղերը հանելով, բաժանում)։

Գալով մեր եղբայրակից հայերի վրա, կասենք որ սոքա բոլորովին մոռացել են իւրեանց ծագումը, լեզուն, սովորութիւններն ու ազանդութիւնները և եթէ սոքա իրանց եկեղեցի չունենան, դժուար թէ կարելի լինէր որոշել վրացիներից։ Հայերը ունէին մի ծխական դպրոց, որը պահպանվում էր ժողովրդեան փողով (նուիրատուութիւններով) բայց ցաւօք սրտի պիտի ասեմ որ այժմ փակուած է. այս առաջին անգամ չէ որ ուսումնարանը փակվում է. այսպիսի վիճակն շատ անգամ է ենթարկվել, որովհետև երբեմն հասարակութիւնը մեղադրում է հոգաբարձուներին իբր թէ սոքա իւրեանց տուած փողը չեն ծառայեցնում ուսումնարանի նպատակին ու երբեմն էլ հոգաբարձութիւն է մեղադրում հասարակութեան, իբր թէ վերջինը սառնասիրտ է դէպի իւր ուսումնարանը և ժամանակին փող չեն հասցնում։ Ասենք թէ ոչ մէկը և ոչ միւսը արդար չէ, ասենք թէ հոգաբարձութիւնն էլ հասարակութիւնն էլ անհոգ են և չեն մտածում իւրեանց վրա. ուրեմն պէտք է ձեռներս լուանանք մեր եղբայրակիցներից, պէտք է մեր կարողութեան չափով չօգնենք նոցա, պէտք է 112 տուն հայերը կուլ գնան։ Եթէ մենք կը խօսանք ու կը գանգատուենք Հնդկաստանի ու Նոր-Նախիջևանի հայերի կրօնաեան վրա, Տաճկաստանի հայերի չարչարանքի ու անհետանալու վրա, մեր քթի տակ եղած եղբայրակիցների վրա էլ չը պիտի ցաւենք։ Գիտեմ կասէք. «ցաւում ենք, ցաւալի է, ափսոս» ոչ պատասխաններ. խօսքերով ցաւակցելուց ոչինչ չի դուրս գայ. պէտք է գործքով ցաւակցել։ Դուցէ ընթերցողը հարցնեն. «ուրեմն ինչ անենք»։ Դրա պատասխանը շատ հեշտ է։ Ցխինվալի հայերը ունեն մի եկեղեցի և երկու քահանայ (անցեալ տարի ունէին երեք քահանայ) որոնք ոչինչ չեն հասկանում. եթէ սոցա հետ քաղաքավարութեամբ վարէինք և այնպիսի գիւղեր ուղարկէինք, ուր շատ կրօնութիւն կայ և սոցա տեղ բերէինք մի օրինաւոր և փոքր ինչ հասկացող քահանայ, նա ամենաքիչ 400 մանէթ տարեկան արդիւնք կը ստանար իւր ծուխից. սրա վրա աւելացրեցէք և այն որ եկեղեցին տարեկան մօտ 150 մանէթ էլ կը տար ուսումնարանին, կարծեմ այժմ էլ տալիս է, այն ժամանակ մենք կունենայինք մի մարդ, որը ստանալով տարեկան մօտ 550 մանէթ օրինաւոր և համեստ կեանք կը վարէր և ընդ նմին կը պարապէր ուսուցչութեամբ։ Շատ կարելի է ընթերցողն ասէ թէ՝ տեղացի հին քահանաները մեղք են և թէ խղճմտանքի ընդդէմ կը լինէր եթէ նոցա զրկէինք. բարի. եթէ երկու մարդուն, այսինքն այնպիսիներին, որոնք զրեթէ հայերէն խօսալ անգամ չեն իմանում, հեռացնելով մեղք կը գործէինք, արա այն 112 տուն հայերը մեղք չեն որ կորչեն, մեր կողմից անիրաւութիւն չէր լինի եթէ նոցա մասաղ սերունդի վրա բարբարոս աչքով նայէինք։ Հաստատ գիտեմ, որ ընթերցողներից շատերի պատասխանը կը լինի հետևեալը «այդ մեր գործը չէ, դա հոգևոր իշխանութեան գործն է»։ Շատ գեղեցիկ, բայց երբ հոգևորականութիւնը մեզ վրա չը մտածէ, մեզ անդունդ տանելիս լինի, մենք ի՞նչ պիտի հետևենք. չէ՞ որ մեր հոգևոր հովի ընտրութիւնը մեր ձեռքին է, չէ՞ որ նոյն իսկ հոգևորականութիւնը մեր անդամներից է կազմուած. հետևաբար եթէ մեր ընտրեալները մեզ հակառակ կը վարուեն, չէ՞ որ մենք իրաւունք ունենք խօսալ, հակառակուել, մեր իրաւունքները պաշտպանել։

Ա.

ՆԱՄԱԿ ԹՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս. 8-ն մարտի

«Մշակի» անցեալ թուականի վերջին համարներից մէկի մէջ ապած էր մի թղթակցութիւն Վաղարշապատից՝ Սիսական սուրբգրութեամբ։ Պ. Նամակագիրը նորանով աշխատում էր ապացուցանել, որ Սիւնեաց վիճակի հայ ժողովուրդը, իր Գերուս գիւղի ընակիչներով հանդերձ, շատ ազէտ է և որ նա չէ հետևում ուսումնարաններ բանալու համար։ Մենք իրրև փոքր ի շատէ ծանօթ նոյն վիճակի կարգերին, պարտաւորութիւն ենք համարում յայտնել, որ այն նամակը գրած էր բոլորովին միակողմանի։ Մենք կատարեալ համաձայն ենք նամակագրի հետ այն կէտում, որ շատ ուէտ են մնացած նոյն վիճակում հայերը, բայց թէ ինչու պէտքն է նոքա այն աստիճան յետադէմ մնացած լինեն, այնպէս որ ուսումնարանին անուանեն «սումաւար», և հարկաւոր է արդեօք դրա մասին մեղադրել միայն ժողովրդին, ահա բուն խնդիրը։

Սիւնեաց վիճակը, որքան մեզ յայտնի է, բընութեան պարգևներով առատ երկիրներից մէկն է. երկրագործութիւնը, խաշնարածութիւնը, չերամապահութիւնը և մեղուաբուծութիւնը հայցնում են ժողովրդին իրենց արդիւնքները առատութեամբ, որի համար մանաւանդ մեզ շատ տարօրինակ է թուում, որ բնականաբար այդպէս հարուստ մի երկրի բնակիչքը գտնվում են այդ աստիճան տգիտութեան մէջ։ Ամբողջ վիճակում չը կայ ոչ մի ուսումնարան, մեծ և վաճառաշահ գիւղերում նորա տեղը փոխարինում է միայն այն, որ քանի մի աշակերտներ սովորում են Սաղմոսը, կամ ժամագիրքը և Շարականը այս կամ այն տիրացուի և երբեմն տէրտէրի մօտ։ Ժողովուրդը համարեա մնացել է նահապետական վիճակի մէջ, մնապաշտութիւնը թագաւորում է ամենայն տեղ իւր բոլոր կերպերով։

Ցեղեկանալով ժողովրդի մտաւոր զարգացման աստիճանը, հետևաբար շատ դժուարութեամբ կարող ենք սպասել նորանից մի որ և իցէ շարժողութիւն դէպի առաջ, սակայն հայոց մէջ կայ մի առանձին դաս, որը իւր կոչմամբ իւր վերա է առել մնացեալ ժողովրդի կրթութեան հոգը—այն է հոգևորական դասը։ Հոգևոր կառավարութիւնը նոյն վիճակում ստանում է ժողովրդից անընդհատաբար կանոնաւոր և անկանոն տուրք. առաջին տեսակին վերաբերում են հոգեբաժինը ննջեցեալներից և աթոռատաս հարկը նորապակներից, երկրորդ տեսակին գիւղացիներից հաւաքվող զանազան գիւղատնտեսական արդիւնքներ՝ իւղ, պանիր, ցորեն և այլն, նոյնպէս վանքերից, մասնաւոր ուխտատեղերից և այլ աղբիւրներից ստացած արդիւնքները։ Բացի այդ նա ունի բաւական նշանաւոր կալուածներ։

Հայ ժողովուրդը ամենայն յօժարութեամբ իւր աղքատութիւնից մասն է հանում հոգևորականներին, փոխադարձաբար սպասելով նորանից իւր պարտականութիւնների բարեխղճութեամբ կատարելուն։ Այնու ամենայնիւ ցաւելով մենք

պէտքն է խոստովանենք, որ տեղւոյն հոգևոր կառավարութիւնը կատարեալ անտարբեր է մնացել իւր այդ դէպի ժողովուրդը ունեցած պարտականութեան վերաբերութեամբ (ի հարկէ այդ պարտականութեան տակ չեն հասկացվում ծիսական քահանաների առանձին վարձատրութեամբ կատարած մկրտութիւն, թաղում, և այլ հոգևոր ծէսերի արարողութիւնը)։ Ուշ տարուց աւելի է ինչ Վեհափառ Գէորգ դ. Կաթողիկոսի շնորհիւ հաստատուած են ծիսական և վանական դպրոցների նախագծերը, իսկ հոգևոր իշխանութիւնը, իւր ձեռքն ունենալով բաւական նշանաւոր արդիւնք, այդքան տարիների ընթացքում չէ հոգացել գոնէ մի դպրոց հաստատելու, ուր կարողանային ժողովրդեան խեղճ դասի երեխայքը ուսանել։ (Բայց թող չը հարցնէ մեզանից ընթերցողը, թէ, եթէ այդպէս է, ապա ուր են գնում այնչափ գումարները...)

Բացի այն որ նա չէ հոգացել մինչ այժմ ուսումնարաններ բանալով լուսաւորել իւր վիճակը, ընդհակառակ մի կերպ նպաստում է ևս ժողովրդեան խաւար վիճակում մնալուն, չը տալով նորան արժանաւոր ծիսական քահանայք։ Մեզ յայտնի են այնպիսի դիպուածներ, երբ մի համարեա բոլորովին անգրագէտ անձն, մի ամիս, ամիս և կէս միջոցում սովորելով հազիւ հազ դժուարութեամբ կարդալ որ և իցէ մի վարդապետի մօտ և ստանալով նորանից վկայական արժանաւոր լինելու մասին (!!), անմիջապէս ստացել է հոգևոր հովի պաշտօնը։ Բայց մենք չենք դարմանում այդպիսի դիպուածների վրա...

Զը կամենալով աւելի երկարացնել նամակս, վերջացնում եմ նորան ուղղելով մի համեստ նկատողութիւն նոյն հոգևոր կառավարութեան, այն է եթէ նա չէ կամենում կորցնել իւր յարգը ժողովրդեան մէջ, գոնէ այսուհետև մի փոքր աւելի բարեխղճութեամբ կատարէ իւր պարտականութիւնքը, թող ընտրութիւն անէ քահանաների ձեռնադրութեանց ժամանակ և հոգայ ուսումնարաններ բանալու ժողովրդի թշուառ մանուկների համար։ Այն ժամանակ և ժողովուրդը անկեղծութեամբ կը սկսի համակրել դէպի իւր հոգևորականութիւնը, և որչափ իւր աղքատութիւնը կը ներէ, ամենայն սիրով կօգնի նորան հասարակաց առաջադիմութեան գործումը։ Հակառակ յիշեալ նամակագրի խօսքերին մենք այժմ իսկ գիտենք գիւղեր, նոյն վիճակում, որոնք մանուկների ուսման նպատակաւ չեն խնայի տարեկան մինչ 500 րուբլի, միայն թէ առաջնորդող լինէր։

Գիւղացի

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեզ գրում են ԼՕՌՈՒ դաւառից որ այս տարի այնտեղ ցանքերը բաւական լաւ են։ Այժմ անձրևային օրեր է անում։

—

Լսում ենք որ ԹԻՖԼԻՍԵԱՆ նահանգի մի քանի տեղերում մորեխ երևեցաւ բաւական նշանաւոր քանակութեամբ։

—

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼԻՑ մեզ գրում են որ այս տարվայ սակաւաձիւն ձմեռը անցնելու միջոցին համարեա շատ տեղ դաշտերը կանաչեցան։ Եղանակը բոլորովին տաք և գարնային է։ Անձրևը երբեմն ուռղանում է դաշտերը, և Ալէքսանդրապօլի նեղ ու ծուռ փողոցները ցեխով են լցված։ Բայց երանի այս անձրևը, աւելացնում է մեր թզթակիցը, մաքրէր մեր մայր եկեղեցու դաւիթը, ուր դիզված են անհամար քանակութեամբ ամեն տեսակ կեղտոտութիւններ որոնք անտանելի գարշահոտութիւն են պատճառում եկեղեցու չորս կողմը։

—

ՄԵԾ-ՂԱՐԱԲԻԼԻՍԱ գիւղից մեզ գրում են՝ «Մեր գիւղը զգալով թէ երկար ժամանակ է չունի ծիսական դպրոցի յարմարաւոր շինութիւն, հասարակական վճռով որոշեց գիւղամիջում մի յարմար գետին նշանակել հոգաբարձութեան առաջարկութեամբ, որտեղ և պէտք է կառուցվի դպրոցը։ Ցուսալի է որ ապագայում բաւական նիւթական աղբիւր պէտք է ունենայ դպրոցը։ Այդ նիւթական միջոցների պակասութիւնն էր դպրոցի առաջադիմութեան արգելող պատճառների գլխաւորը։ Գիւղի բնակիչները վերջապէս սկսեցին մտածել իրանց կենսական պահանջների վրա. տեսնելով գիւղիս գլխաւոր փողոցների սարսափելի ցեխից պատճառած վնասները, նոքա ձեռք տուեցին փողոցների մաքրելուն և բարեկարգելուն։ Այդ գործի անխոնջ շարունակելով պարտական ենք մի կողմից ժողովրդի յօժարութեանը, իսկ միւս կողմից գիւղիս տանուտէրի պաշտօնակատար Ա. Միրզայեանցի աշխատութեանը»

—

ԹԻՖԼԻՍԻ Քաղաքային Վարչութիւնը սորանով յայտնում է ընդհանուր գիտութեանը, որ նորա ներկայութեամբ, Վարչութեան մէջ, մարտի 19-ին ներկայ թվի նշանակված է աճդրախօսութիւն, առանց կրկնաճդրախօսութեան կապալով տալու համար Նաֆթլուղի քաղաքային դաչտ, 480 դեսեատին և 100 քառակուսի սաժէնի մեծութեամբ, համեմատ Ուպրավայի մէջ ունեցած պայմանների (կոնդիցիաների) երեք տարի ժամանակով։ Ցայտարարութիւնները կարող են ներկայացրած լինել թէ բերանացի և թէ մըհրած ծրարների մէջ։

—

Մարտի 9-ին մեզ աջողվեցաւ ներկայ դանվել ԹԻՖԼԻՍԻ թատրոնում տրվող ներկայացմանը յօգուտ պ. Պետրովսկի թատրոնական կասիրի։ Տալիս էին Фаустъ на изнанку ֆրանսիականից թարգմանած օպերա-բուֆ։ Գլխաւոր դերերը խաղում էին՝ տիկին Դէկէր-Շէնկ և պ. Կ. Ց. Կօրգանով։ Մեր հայ երիտասարդը, Թիֆլիսի յայտնի հայ ընտանիքից, յանկարծ դարձել է դերասան, երևակայելով իրան թէ ճշմարիտ տաղանդ ունի։ Մեր կարծիքով այդքան անպատրաստ առանց որ և է բեմական ընդունակութեան, առանց ձայնի մի նշոյլ ունենալու, դուրս գալ բեմը, ինչպէս որ դուրս եկաւ պ. Կօրգանով,—բաւական յանդգնութիւն պէտք է ունենալ....

—

Պ. պ. հիմնողներ «Կենդանիների հովանաւորութեան Կովկասեան ընկերութեան» և այն բոլոր անձինք, որոնք համակրում են այդ գործին, հրաւիրվում են վաղը, մարտի 15-ին, երեքշաբթի օրը, Կովկասեան Գիւղատնտեսական Ընկերութեան բնակարանը, հիմնվող ընկերութեան կանոնադրութեան պրօէկտը քննելու համար, որպէս զի այդ պրօէկտը ընդունելուց յետոյ ներկայացվի կառավարութեան հաստատութեանը։

—

Հրատարակվեցաւ այս օրերս ռուսերէն լեզուով «Кавказскій Альманахъ» (Կովկասեան ալմանախ,—օրացոյց) 1877 թվի համար։ Հրատարակողը կամ խմբագիրը պ. Շահտախտինսկի է։ Բացի ամենամանրաժեշտ, ամեն օրացոյցի մէջ միշտ տպվող գործնական տեղեկութիւններից, յիշեալ օրացոյցը պարունակում է իր մէջ մի քանի հետաքրքիր յօդուածներ, թէ բանասիրական թեթև բովանդակութեան, թէ քաղաքական և ներքին տեսութեան։ Ծախվում է 50 կոպէկով «Սուլթան» ծխախոտի խանութում, Գրիգորեանցի գրավաճառանոցում և «Իվանովի» ընթերցարանում։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՒՐՔԻԱ

—

Հեռագիրը հաղորդում է որ մարտի 7-ին (19) կատարվեցաւ Օսմանեան պարլամենտի հանդիսաւոր բացումը։ Պարլամենտի բացման ժամանակ կարդացվեցաւ սուլթանի գահի ճառը, որ խոստանում է կառավարչական ու ֆինանսական վերանորոգութիւններ և յայտնում է որ չը նայելով թէ Կ. Պոլսի եւրոպական կոնֆերէնցիան անաջող ելք ունեցաւ, Բ. Դուռը այնու ամենայնիւ ցոյց տուեց իր հաստատ դիտաւորութիւնը նախատեսել եւրոպական պետութիւնների ցանկութիւնները։—«Հեռագրական ռուս ընդհանուր ընկերութիւնը» հաղորդում է որ Ռուսաստանի և Անգլիայի մէջ համաձայնութիւն հաստատվեցաւ որ՝ Ելեան խնդրին վերաբերեալ պրօտոկոլի (արձանագրութեան) էութեան մասին։ Պետութիւնների դեսպանները սպասում են իրանց տէրութիւններից պաշտօնական լիազօրութիւններ, որ ստորագրեն Լօնդօնում կազմված պրօտոկոլը։ Երևի այս օրերս պրօտոկոլը ստորագրված կը լինի։—Կ. Պոլսից հեռագրում են որ այնտեղ օրից օր աւելի յուզմունք է նկատվում ժողովրդի մէջ և ամեն րօպէ սպասվում է յեղափոխութեան ծագելը։ Մայրաքաղաքի զօրքերը շատ հաւատարիմ չեն երևում տէրութեանը։—Թիւրքիայի և Զէրնօգօրայի մէջ բանակցութիւնները դեռ չեն հասնում որ և է աջող հետևանքի։ Թիւրքիան ոչինչ զիջումներ չէ կամենում անել Զէրնօգօրիային և նայում է Զէրնօգօրիայի վրա, որպէս թիւրքաց պետութեան մի մասի վրա։ Թիւրքիան չէ համաձայնվում Զէրնօգօրիային ոչ Նիկշիչ տալ, ոչ էլ Թոյլ տալ Նրան ունենալ մի նաւահանգիստ։—Բանակցութիւնները Թիւրքիայի և Զէրնօգօրիայի մէջ ընդմիջված են։—Զէրնօգօրիայի իշխան Նիկօղայոս նախապատրաստում է շարունակել Թիւրքիայի հետ այդ բանակցութիւնները Վիէննայում։

ԹԻՒՐՔԱՑ ՏՊԱԳՐԱԿԱՆ ՆՈՐ ՕՐԷՆՔ

Տպագրական նոր օրէնքն, որ տակաւին քննիչ յանձնաժողովոյ քովէն անցած չէ, և նոր հաստատուելիք երեսփոխանական և ծերակուտի ժողովոց հաւանութեանը կը կարօտի, հետևեալ տրամադրութիւնները կը պարունակէ լրագրաց նկատմամբ։

Ամեն անհատ, որ իւր քաղաքային իրաւունքները կը վայելէ, կրնայ լրագիր մը հրատարակել, միայն թէ հրատարակելէն ամիս մ'առաջ պէտք է իմացնէ Մեծ-Եպարքոսի Միւսթեշարութեան դիւանին՝ հրատարակելիք թերթին անունը, նպատակը, տնօրէնին անունը, և այլն։ Առանց այս պայմանին հրատարակեալ լրագիր մը հինգէն տասն և հինգ լիրա տուգանք վճարելու պիտի դատապարտուի։ Օրինաց դատապարտեալ յօդուածները պարունակող լրագիրք քաղաքային ատենից առջև դատ պիտի ենթարկին, և տնօրէնը տուգանք կամ բանտարկութեամբ պիտի պատժուի. իսկ լրագրաց դադարման կամ խափանման պատիժը պիտի վերնայ, ինչպէս նաև դրօշմի տուրքը։

(Մասիս)

ԱՄԵՐԻԿԱ

—

Քաղուածք ենք անում «International Review» լրագրից հետևեալ հաղորդութիւնը Միացեալ Նահանգների մասին։

Ադմինիստրացիան (կառավարութիւնը) ամենավատ դրութեան մէջ է Ամերիկայում։ Աղատ, չը բռնած պաշտօնական տեղերը ստանում են շատ անգամ անարժան մարդիկ, որոնք իրանց անառակութիւնով խանդարում են հասարակութեան ապահովութիւնը։ Կաշառութիւնը դատաստաններում մի սովորական բան է դարձել։ Վաշինգտօնի կառավարութիւնը շատ անգամ խարդախների կողմն է անցկենում։ Թալանութիւններ, յափշտակութիւններ—ամեն տեղ են։

Բաժանվում են զանազան կօնցէսիաներ (իրաւունք հիմնել ինչ որ և իցէ) առանձին առանձին ընկերութիւնների։ Խրախուսվում են զանազան մենաշնորհութիւններ։ Արուեստագործութիւնը վայր է ընկել։ Մանկութիւնները սպառնում են գործունեայ մարդկերանց։ Ահագին տէրութեան պարտքը նահանգների վրա է։

Մօտ տասն և հինգ տարի սրանից առաջ հանրապետութեան նաւատորմը (ֆլոտը) համարեա առաջին տեղն էր բռնում լուսաւորված երկիրների նաւագնացութեան մէջ,—իսկ այժմ դժուարութեամբ թէ բռնի երկրորդական տեղը։

Նիւ-Իօրկում կայքերի գինը սաստիկ ցածացել է։ Նոյնը նկատվում է և միւս միացեալ նահանգներում։ Օրինակ Նիւ-Ժէրսէում ֆէրմաների (գիւղական տնտեսութիւնների) մեծ մասը դատ դրած են և ոչ փող կայ, ոչ կարողութիւն ու հնարք հանել նրանց զբաղուի տակից. իսկ եթէ ծախվեն, տալս են մի հնչեն գին։ Ընդհանուր անշարժութիւնից առուտուրի մէջ սաստիկ աղքատութիւն է և ինչպէս առհասարակ գործի պակասութիւնից—յանցանքների թիւը բազմապատկվում է։ Ներկայ ժամանակս մի աւազակաց խումբ արշաւում է Նիւ-Իօրկի շրջակայքում, որը այս քանի օրս կողոպտել է բոլորովին Բաֆֆինսվուդում երեք տուն։ Ոստիկանութիւնը դեռ ևս ոչինչ չէ արել։ Մարիսնում գողերը մնան մի բանկային տուն, բայց չը կարողանալով այնտեղից ոչինչ տանել, գնացին Ադամի գրասենեակը կոտրեցին դրամարկղը և հանգիստ հեռացան, առնելով իրանց հետ փողերը։ Լանկաստերում Բաամի բանկային անից յափշտակված է 50,000 ֆրանկ։ Մանչէստերում զինուորված աւազակների մի խումբ սղոցելով մառանի հաստ պատը, դատ փողի արկղը, բայց չը կարողացաւ ջարդել, այն ժամանակ անպիտանները ծակեցին գլխովը երկաթեայ արկղը և գցեցին մէջը մի փամփուշտ այրվող նիւթով լցուած։ Օդը սաստիկ թնդաց, տան պատուհանների ապակիները փշրվեցին, արկղը ջարդվեց, բայց կասայի գաղտնի բաժանումը դեռ ևս մնացել էր։ Մի րօպէում մի նոր փամփուշտով պատառեցին և գաղտնի արկղամասը։ Մօտ 100,000 ֆրանկ դրին գրպանները, դուրս եկան և ծաղրածութեան համար կայրին դռնից թէ՝ «բանկային տունը փակ է»։ Իհարկէ հարևանները լսեցին այս գոռոցի ձայնը, բայց մինչև ստուգապէս իմացան պատճառը և տեղը, աւազակները արդէն անյայտացան։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Նրևելի երգիչ տիկին Պատտի, որ պակված է մարկիզ Կօի հետ, նորերումս բաժանվեց իր ամուսնուց։ Ահա ինչ է պատմում այդ մասին «Figaro» լրագիրը՝ «Մօտ վեց ամիս սրանից առաջ ամբողջ Փարիզը խօսում էր Պատտի տիկնոջ և պարոն Նիկօլինիի սիրոյ մասին։ Անցեալ ամառը Նիկօլինի համարեա ամենայն երեկոյ Պատտիի մօտ էր լինում և այդ պատճառով մարկիզ Կօ նեղանում էր և խանդօտ էր դարձել։ Մարկիզը վերջապէս արգելեց իր կնոջը գնալ Ս. Պետերբուրգ, որպէս զի չը պատահէ այնտեղ Նիկօլինիին։ Իսկ Նիկօլինի յայտնեց թէ մնում է Փարիզում։ Բայց այնու ամենայնիւ հանգամանքները երեքին էլ Ս. Պետերբուրգ բերեցին։ Տպիս էին «Լա Տրավիատա» օպերան։ Կատարած այն պատճառով որ Մազինիի տեղ Ալֆրէդի դերը յիշեալ օպերայի մէջ տուած է Նիկօլինիին, մարկիզը սկսում է սաստիկ կերպով նախատել իր կնոջը, իսկ Պատտին, պատասխանելու տեղ, շպրտում է նրան իր բոլոր թանգագին ակնեղէնները, երգելով «Տրավիատայից» մի եղանակ բացականչում է՝ «Մարկիզ, մենք վերջացրինք մեր հաշիւները...» Ի հարկէ այդ տեսակ հետևանք հարկաւոր էր սպասել...»—Այդ նկատողութեանը «Ֆիգարօի» մէջ տիկին Պատտի պատասխանեց խմբագրութեանը ուղղված մի նամակով, որի մէջ հերքում է լրագրից հաղորդված իր ամուսնու հետ բաժանվելու հանգամանքների մանրամասնութիւնների ճշդութիւնը։ Բայց Պատտիի իր մարդուց բաժանվելու փաստը ուղիղ է, և չուտով գործը պէտք է քննվի ֆրանսիական դատարաններում։

* * *

«Русскій Міръ» լրագրին հաղորդում են Լօնդօնից թէ Ամերիկայից մօտ օրերումս ուղարկված են Թիւրքիա 482 հազար նոր ձևի հրացաններ, 420 միլիօն պղնձեայ փամփուշտ, իսկ չուտով էլ կը ստացվեն 300 միլիօն փամփուշտ և 200 հազար հրացան։

* * *

Կ. Պոլսի «Մասիս» լրագրում կարդում ենք հետևեալը՝ «Բերկրութեամբ կը լսենք թէ Խրիմեան սրբազանը կայսերական հրամանաւ Օսմանեան ծերակուտի (սենատի) ժողովին անդամ անուաներ է 10 հազար դրուշ ամսականաւ։»

* * *

«Փունջ» լրագրի մէջ կարդում ենք հետևեալ լուրը՝ «Պաղչեճիք բնակեալ 50 տան չափ հա-

սունեան կաթոլիկ հայերը՝ իրենց առաջնորդ Այվազեան Յովսէփ վարդապետին հետ Հայաստանեայց եկեղեցւոյ գիրքը վերադարձեր են։»

* * *

Մարտի 10-ին, հինգշաբթի օրը Թիֆլիսի արուեստաւորների ընկերութեան մէջ պարահանդէս կար, մասնաւորապես՝ բայրամ տօնի պատճառով։ Ժողովուրդ շատ կար, և երեկոն շատ լաւ անցաւ։

* * *

Այսօր, մարտի 14-ին Թիֆլիսի քաղաքային Դումայի մէջ լինելու է ճայնաւորների նիստ։ Խնդիրներից մինը՝ դռնապանների և հասարակների խնդիրն է։ Դա ամենակարեւոր խնդիրներից է մեր քաղաքի համար։ Նիստը սկսւում է 7½ ժամին։

* * *

Ստացանք Մարսէյլից՝ չոգենաւերի հայոց ընկերութեան կանոնադրութիւնը՝ «Statuts de L'Arménienne, société anonyme de navigation a vapeur.»

* * *

Ֆրանսիական «La Jeune Republique» լրագրում կայ մի յօդված հայերի վրա «La race arménienne» վերնագրով։ Յօդուածագրի հայերի մասին յայտնած մաքերի հետ կաշխատենք ծանօթացնել ընթերցողիս միւս համարում։

* * *

«Montreal Vitness» հաղորդում է հետաքրքիր տեղեկութիւններ առաջին մի կամուրջի մասին, որ շինւում է Ամերիկայի Միացեալ Նահանգների սուրբ Լաւրէնտիոսի գետի վրա։ Կամուրջի երկարութիւնը պէտք է 4 մղոնից աւելի լինի։ Շինութիւնը գնահատված է 5 միլիոն ռուբլի, և կը վերջանայ երեք տարից յետոյ։

ХРѢНОВЫЙ ІОДИСТЫЙ СИРОПЪ
SIROP DE RAIFORT IODÉ
DE GRIMAULT ET Cie

Средство это содержитъ въ себѣ іодъ въ соединеніи съ сокомъ противу цинготныхъ растеній: хрѣна, ложечной травы и крессона. Предписывается врачами антифатическимъ и золотушнымъ дѣтямъ вмѣсто тресковаго жира.

Каждый фл[illegible], изъ зеленаго стекла, имѣетъ вытисненныя слова: Sirop iodé de Grimault et Cie, а равно и подпись ихъ вокругъ горлышка. — Продается во всѣхъ аптекахъ Россіи.

DENTIFRICES RIGAUD
Большая медаль за заслуги
8, Rue Vivienne, 8
PARIS
На всемірной выставкѣ въ Вѣнѣ.

CRÈME DENTIFRICE SOLIDIFIÉE
(Тѣсто для чищенія зубовъ)

Этотъ превосходный составъ придаетъ зубамъ отличный бѣлый цвѣтъ и укрѣпляетъ десны, не представляя притомъ ни одного изъ недостатковъ обыкновенно употребляемыхъ зубныхъ порошковъ, вредно дѣйствующихъ на эмаль зубовъ. Это тѣсто не оставляетъ осадка на щеткѣ, оно лишь слегка окрашиваетъ ее розовымъ цвѣтомъ.

DENTORINE RIGAUD
(Зубной эликсиръ Ригоу)
На всемірной выставкѣ въ Вѣнѣ.

Входящая въ этотъ эликсиръ эссенція даетъ этому продукту свойство исключительное возвращать бѣлизну зубамъ, очищаетъ дыхание и обезсчащаетъ кулинію крови. Нѣсколько капель въ стаканѣ воды достаточно, чтобы сдѣлать воду совершенно ароматическою и освѣжить ротъ въ высшей степени пріятно.

ВЪ ТИФЛИСѢ У ЦУРИНОВА

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՍԱԼԻՑԻԼԱՆ

միջոց ատամների համար

Լ. Է. ԱԴԷԼՀԱՅՄ

ատամնաբոյժի

Փորձված լինելով բժշկական պրակտիկայով, սալիցիլեան պրեպարատները, բժշկական առաջին հեղինակութիւնների հետաքրքրութիւնների շնորհով ստացան մեծ անուն, որպէս առողջապահական ամենալաւ միջոցներ բերանի և ատամների համար, առաջարկվում են հեղուկի (բերան ողողելու համար) և ատամների փոշիի ձևով, նշանով են յայտնի, որ պահպանում են ատամները փչանալուց և ոսկորի փտելուց, առաջ են առնում ատամների վրա քարի կազմվելուն, ոյժ են տալիս ծնոտին և բերանին հաճելի թարմութիւն են տալիս։

Գինը ատամների սալիցիլեան

էլիկսիրի	1 ր. 25 կ.
» » փոշի	1 » 25 »
» » պաստայի	1 »
» » մաստիկի (ատամները պլոմբելու համար)	1 »
» ատամների կաթիլներ	50 »

Այդ արդիւնքը օպտով և մաս մաս ծախվում է ԹԻՖԼԻՍՈՒՄ Ց. Ս. ԾՈՒՐԻՆՈՎԻ և ընկ. մօտ։

Въ Тифлисѣ у Цуринова 7 (12)

ԱՄԵՆԱՀԱՍՏԱՏ ՄԻՋՈՑ

ՓՈՔՐ ԵՒ ՄԵԾ ՄԿՆԵՐ, ԽԼՈՒՐԴՆԵՐ ԵՒ ՄԻՋԱՏՆԵՐ ՈՉՆՉԱՑՆԵԼՈՒ։
ՐԻՍ ԳՈՒՏՄԱՆ ՔԻՄԻԿՈՍ ՊԷՇՏԻՑ

ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՏԱՆ ՀԱՅԹԱՅԹԼՔ

Որ մի քանի արտասահմանեան պատուոյ լատներից արտօնութիւններ ունի։

Պատիւ ունեմ առաջարկել թէ հասակութեանը, թէ պ. պ. վաճառականներին ինձանից հնարած ամենաներ և մեծ ներգործութիւն ունեցող միջոցներ՝ մկներ, խլուրդներ և ամեն տեսակ միջատներ, ինչպէս օրինակ սև ուտիճ (տարական) ցեց, մրջիւն, բաղինջ, լու և այլն, ոչնչացնելու համար։ Ցիշեալ միջոցները, որք իմ գիւտերն են և ինձանից պատրաստված են, ստացան կատարեալ հաւանութիւն և յայտնի են ամբողջ Եւրոպայում, որի համար և ունեմ վկայագրեր։

Այդ միջոցները արժանացան Մոսկվայի բազմարվստահան հանդիսում 1872 թուին մեծ արծաթեայ մեդալի և Վիէնայի աշխարհահանդիսում 1873 թ. առաջադիմութեան համար մեդալի (Fortschritts—Medaille):

ՀՆԱՐՈՂԸ ԵՐԱՇԽԱՒՈՐ Է ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՍՏԱՏ ՆԵՐԳՈՐԾՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ։

Մեծ քանակութեամբ առնողներին զիջումն կը տրուի։

ԳՆԵՐԸ՝

Մկների և խլուրդների դէմ դեղը մի սրուակի համար 1 ր. 50 կոպ.։ Փոշին սև ուտիճների, ցեցի մրջիւնների և լուերի դէմ 1 ռուբլ։ Սորա հետ հարկաւոր է առնել և գուտապէրչի փոքրիկ մեքենաներ իւրաքանչիւրը 60 կոպ.։

Հեղուկ բաղինջների դէմ մի սրուակ 1 ր.։

Այդ միջոցը ունի անուշ հոտ, բիծեր չէ անում և յանկարծակի է ներգործում, որի համար երաշխաւոր է գլխաւոր Դէպօ։

Հաստատ միջոց կոշտերի և կաչու կոշտութիւնների դէմ, մի սրուակ 60 կոպ.։

Գլխաւոր դէպօ ԹԻՖԼԻՍՈՒՄ պ. ԼԱՆԿՈՒ մուղիկայի ապրանքներում, Դվորցովի փողոցում, Արծրունու տանը։ ՎԼԱԴԻԿԱՎԿԱՍՈՒՄ պ. ՍԵԳԱԼԻ մօտ, իսկ ՍՏԱՎՐԱՊՕԼՈՒՄ պ. ԿՈՒՐԻԼՉԷՆԿՈՒ մօտ։

Օտարաքաղաքացիները թող բարեհաճեն ճանապարհի ծախսը վճարել յիշեալ միջոցները ուղարկելու համար։ Կարող են թէ փողով, թէ փոստի մարկաներով։ 50 (50)

Ե. ԾԱՏՈՒՐԵԱՆՑԻ ՊԱՀԵՍՏ

Քսան օրվայ միջոցում ծախվելու են ամենահէժան գներով նեղքև յիշված զանազան ապրանքներ Դվորցովոյ փողոցում, Արծրունու գոլէրէում № 146, Թիֆլիսում։

500 հատ գրաֆին թրաշ, հատը 50 կոպէկից մինչև 2 ռուբլ։ 100 հատ ծաղիկների վազներ, ջուխտը 1—5 ռուբլ։ 50 հատ ենջարանի լապտերներ 7 մոմով, հատը 12 ռուբլ։ 200 դիւժին գուլպաներ ֆիլդէկոսի, դիւժինը 2—4 ր.։ 50 դիւժին կանանց գուլպաներ ֆիլդէկոսի, դիւժինը 9 ռուբլ։ 50 ջուխտ կանանց կիսակօշիկ, ջուխտ 4 ր.։ 200 դիւժին սուտաշներ զանազան գներով։ 50 հատ սիրոց 24 մարդու, հատ 10 ռուբլ։ 2000 դիւժին կրիստալ-ապակեայ բաժակներ զանազան տեսակ, 1 ր. 60 կոպէկից—4 ռուբլ։ 20000 հատ հասարակ ապակեայ բաժակ հատը 1 կոպէկից մինչև 15 կոպ.։ 500 դիւժին շամպանի բօչկաներ, դիւժինը 60—80 կոպ.։ 50 հատ լուացվելու ամաններ՝ 5 ռուբլ։ 200 հատ սուդոկ (խարդալի, ձէթի և կացախի համար) իւրաքանչիւր 1 ր. 20—2 ր. 50 կ.։ 200 ֆունտ թէլ սև և սպիտակ, ֆունտը 95 կոպէկից մինչև 4 ր. 70 կոպէկ։ Եւ ուրիշ շատ ապրանքներ։ 1—3

ԿՈՒՐՑՈՎ

Պատիւ ունեմ յայտնել թէ ԹԻՖԼԻՍԻ, թէ այլ քաղաքների հասարակութեանը որ իմ գործարանը պատրաստում է ԵԿԵՂԵՑԱԿԱՆ սպիտակ ՄՈՄԵՐ, իստակ և բնական մոմից, առանց որ և է խառնուրդի։ Իմ առուտուրը էանվում է Սիօնի փողոցի վրա, ԹԻՖԼԻՍՈՒՄ, Անտոնովի քարվանսարայում։

Գինը պուդի համար 29 ռուբլ։

Մոմերի բնական և ընտիր լինելու մասին պատասխանատու եմ։

1—3 Ի. ԿՈՒՐՑՈՎ.

ՌՈՒՍԱՑ ԼԵԶՈՒ

Այդ լեզուի դասատուութեամբ պարապում է Գուստավ Քալանթարեանցը։ Հարցնել Մովսէս Ցարութիւնեանցի տանը, Սապէօրնի փողոցում։

ԳՈՒՍՏԱՎ ՔԱԼԱՆԹԱՐԵԱՆՑ

3—3

„ՓՈՐՁ"

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

ԵՌԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԷՍ

«Փորձը» հրատարակվում է հետևեալ ծրագրի համեմատ բովանդակութեամբ։

Ա. ԳՐԱԿԱՆԱԿԱՆ. Այս բաժնի մէջ կը մտնեն թէ ինքնուրոյն և թէ օտար լեզուներից թարգմանած բանասիրական աշխատութիւններ՝ կեանքից առնուած նկարագրութիւններ, վէպեր, ռոմաններ, դրամատիկական գրուածներ—թէ արձակ և թէ ոտանաւոր։

Բ. ՊԱՏՄԱԿԱՆ. Յօդուածներ Հայոց, Ռուսաց և ընդհանուր պատմութիւնից։ Այս բաժնի մէջ կը մտնէ նաև ժամանակակից քաղաքական կեանքի տեսութիւնը։

Գ. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ. Դիւրըմբռնելի ոճով գրուած զանազան յօդուածներ դիտութեան այլ և այլ ճիւղերից առնուած։

Դ. ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ. Մանկավարժական հարցերի վերաբերեալ ընդհանուր յօդուածներ, դպրոցական գործի այժմեան դրութիւնը թէ Հայոց մէջ և թէ Ռուսաստան ու արտասահման։

Լ. ԳՆՆՈՒԹԻՒՆ և Մատենախօսութիւն Հայոց, Ռուսաց և օտար լեզուներով լոյս տեսած նշանաւոր գրքերի։

Զ. ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Այս բաժնի մէջ կը տպագրուին այնպիսի յօդուածներ, որոնք մեր ազգի ներկայ վիճակի քննութեանն են նուիրած, այն է՝ եկեղեցւոյ, ուսումնարանաց, ուսուցչաց, ազգային լուսաւորութեան, ազգային տնտեսութեան և հասարակական կեանքի։ Կը լինեն թղթակցութիւնք ամեն հայաբնակ տեղերից, կարգադրութիւնք Տէրութեան և Հոգևոր Վարչութեան։

Է. ՆԵՐԲԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Տեսութիւն ներքին գործոց Ռուսաստանի ընդհանրապէս և Անդրկովկասի առանձնապէս։ Այս բաժնի մէջ կը բովանդակին նաև թղթակցութիւնք և զանազան հաղորդագրութիւնք Ռուսաստանի և Կովկասի կեանքի մասին։

Ը. ԱՅԼԵՒԱՅԼԷ։ Ամեն տեսակ լուրեր։

Թ. Յայտարարութիւններ տեղական և եւրոպական լեզուներով։

Փորձի բաժանորդագրիները ամենայն տեղ տասը մանէթ է։

Ստորագրուիլ կարելի է Տիֆխիսում՝ «Փորձի» խմբագրատանը, Հ. Էնֆիաճեանցի ծխախոտի խանութում և Զաքարիա Գրիգորեանցի գրավաճառանոցում։ Օտարաքաղաքացիք կարող են դիմել խմբագրին հետևեալ հասցէով—Тифлисъ. Въ Редакцію Армянскаго журнала «ПОРДЗЪ», իսկ արտասահմանից—Tiflis. Rédaction du journal Arménien «PORDZ».

3—3

Дозволено цензурою 12 Марта 1877 г. Тифлисъ. Типографія Мартиросіанца Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ